Մրցույթի անցկացման պայմանները

Մրցույթին մասնակցել ցանկացող կազմակերպությունները, մրցույթի մասին հրապարակային ծանուցման պահանջներին համապատասխան, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) ներկայացնում են մրցույթի հայտերը: Մրցույթի հայտերը ներառում են հետևյալ տեղեկություններն ու փաստաթղթերը.

ա) մրցույթի մասնակցի անվանումը գտնվելու վայրը, հեռախոսահամարները, պետական գրանցման վկայականի պատճենը,

բ) սարքավորումների և/կամ ծրագրային ապահովման նկարագրությունը, մատակարարման ժամկետները,

գ) նախորդ հաշվետու տարվա ընթացքում իր կողմից նմանատիպ ծառայությունների մատուցման ծավալը՝ նշելով պատվիրատուներին և կցելով պայմանագրերի պատճենները,

դ) մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից մատակարարվող ապրանքների և մատուցվելիք ծառայությունների որակը,

ե) մասնակցության վճարի մուծումը հաստատող փաստաթուղթը:

Մրցույթի հայտերը ներկայացվում են սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով: Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից և մեկ կրկնօրինակից, որոնց վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «կրկնօրինակ» բառերը: Միաժամանակ ծրարի վրա պետք է կատարվեն՝ մրցույթի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված մրցույթի հայտի ներկայացման վայրի /հասցեի/ և «չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը» գրառումները:

Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտեր ներկայացնելը, Բանկի դրամարկղ մուծում են կամ փոխանցում են Բանկի 103002101519 հաշվեհամարին մրցույթի մասնակցության նախավճար՝ 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: Մասնակցության նախավճարը ենթակա է հետ վերադարձման, եթե տվյալ կազմակերպությունը մրցույթում հաղթող չի ճանաչվել: Հաղթողին նախավճարը վերադարձվում է մատակարարման պայմանագիրը կնքելու դեպքում, հակառակ դեպքում այն վերադարձման ենթակա չէ:

Մրցույթի մասնակիցները, մինչև մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնական ժամկետի ավարտը, կարող են փոփոխել կամ հետ վերցնել հայտերը: Մրցույթի հայտի փոփոխությունը ներկայացվում է սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով՝ ծրարի վրա ավելացնելով «փոփոխում» բառը:

Մրցույթի արդյունքների մասին արձանագրության ձևակերպումից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում Բանկի և մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի /մասնակիցների/ միջև կնքվում է պայմանագիր, ընդ որում Բանկը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցին առաջարկում է կնքել պայմանագիրը մրցույթի արդյունքների մասին արձանագրության ձևակերպումից հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Մրցույթում կարող են հաղթող ճանաչվել մեկից ավելի կազմակերպություններ՝ հաշվի առնելով մատակարարվող ապրանքի տեսականին և այլ հանգամանքներ:

Հրապարակային ծանուցում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կողմից մատակարար (ծառայություն մատուցող) կազմակերպությունների ընտրության մրցույթի մասին

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն մատակարար կազմակերպությունների ընտրության նպատակով 2021 թվականի մարտի 05-ից կազմակերպում է բաց մրցույթ:
Ստորև ներկայացվում է ապրանքների տեսակը, անվանումը և քանակը:

Տեսակ	Նկարագրություն	Քանակ
Սեղանի համակարգիչ - 1	HP ProDesk 400 G7 SFF Տեսակը - SFF (Small Form Factor) - Պրոցեսորը՝ առնվազն 3.6GHz հաճախականությամբ (Intel Core i3 կամ համարժեք, առնվազն 10-դ սերնդի), նվազագույնը 4 միջուկ , 6MB քեշ հիշողություն, առավելագույնը 65Վտ հզորություն : Intel Q470 չիփսեթով : Օպերատիվ հիշողություն՝ 8GB, DDR4-2666, նվազագույնը 1 հատ ազատ SDRAM սլոթի հնարավորությամբ: Նվազագույնը 256MB ծավալով SSD սկավառակ: Գրաֆիկական քարդ - ներկառուցված (Integrated) - UHD Graphics 630 Օպերացիոն համակարգ՝ FreeDOS: Ցանցային բնիկ RJ-45 ստանդարտի: Անհրաժեշտ պորտեր՝ նվազագույնը 9 հատ USB պորտ, HDMI, DisplayPort, VGA (հնարավոր է փոխարկիչի միջոցով), ներկառուցված ցանցային քարտ - 10/100/1000 LAN, Սնուցման բլոկը 180Վատտ: Համակարգիչը պետք է բավարարի ENERGY STAR սերտիֆիկացման պայմաններին: Մկնիկ – USB Optical scroll , ստեղնաշար – USB; ստեղնաշար և մկնիկը՝ համակարգչի հետ նույն արտադրողի: Երաշխիք՝ 3 տարի, որը սպասարկվում է Հայաստանում գործող արտադրողի կողմից ավտորիզացված 2 սպասարկման կենտրոններում: պետք է պարտադիր տրամադրվի արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF):	25
Սեղանի համակարգիչ - 2	HP ProDesk 400 G7 SFF Տեսակը - SFF (Small Form Factor) - Պրոցեսորը՝ առնվազն 3.1GHz հաճախականությամբ (Intel Core i5 կամ համարժեք, առնվազն 10-դ սերնդի), նվազագույնը 6 միջուկ, 12MB քեշ հիշողություն, առավելագույնը 65Վտ հզորություն : Intel Q470 չիփսեթով : Օպերատիվ հիշողություն՝ 8GB, DDR4-2666, նվազագույնը 1 հատ ազատ SDRAM սլոթի հնարավորությամբ: Նվազագույնը 256MB ծավալով SSD սկավառակ: Գրաֆիկական քարդ - ներկառուցված (Integrated) - UHD Graphics 630 Օպերացիոն համակարգ՝ FreeDOS: Ցանցային բնիկ RJ-45 ստանդարտի: Անհրաժեշտ պորտեր՝ նվազագույնը 9 հատ USB պորտ HDMI, DisplayPort, VGA (հնարավոր է փոխարկիչի միջոցով), ներկառուցված ցանցային քարտ - 10/100/1000 LAN : Սնուցման բլոկը 180 Վատտ: Համակարգիչը պետք է բավարարի ENERGY STAR սերտիֆիկացման պայմաններին:	15

	Մկնիկ – USB Optical scroll , ստեղնաշար – USB; ստեղնաշար և մկնիկը՝ համակարգչի հետ նույն արտադրողի: Երաշխիք՝ 3 տարի, որը սպասարկվում է Հայաստանում գործող արտադրողի կողմից ավտորիզացված 2 սպասարկման կենտրոններում: պետք է պարտադիր տրամադրվի արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF):	
Սեղանի համակարգիչ - 3	HP ProOne 400 G6 20 inch All-in-One PC Տեսակը - Ամբողջը մեկում - Պրոցեսորը՝ առնվազն 3.0GHz հաճախականությամբ (Intel Core i3 կամ համարժեք, առնվազն 10-դ սերնդի), նվազագույնը 4 միջուկ, 8MB քեշ հիշողություն, առավելագույնը 35Վտ հզորություն : Intel Q470 չիփսեթով : Էկրան(Display) ոչ պակաս 19,5", WLED-backlit, FullHD (1920 x 1080), Antiglare , Օպերատիվ հիշողություն՝ 8GB, DDR4-2666, նվազագույնը 1 հատ ազատ SDRAM սլոթի հնարավորությամբ: Նվազագույնը 256MB ծավալով SSD սկավառակ: Գրաֆիկական քարդ - ներկառուցված (Integrated) - UHD Graphics 630 Օպերացիոն համակարգ՝ FreeDOS: Ցանցային բնիկ RJ-45 ստանդարտի, 10/100/1000 MB վարկյանում թողունակությամբ: Անհրաժեշտ պորտեր՝ նվազագույնը 6 հատ USB պորտ, 1 հատ Type-C , HDMI, ներկառուցված ցանցային քարտ - 10/100/1000 LAN: Սնուցման բլոկը 90 Վատտ: Համակարգիչը պետք է բավարարի ENERGY STAR սերտիֆիկացման պայմաններին: Մկնիկ – USB Optical scroll , ստեղնաշար – USB; ստեղնաշար և մկնիկը՝ համակարգչի հետ նույն արտադրողի: Երաշխիք՝ 3 տարի, որը սպասարկվում է Հայաստանում գործող արտադրողի կողմից ավտորիզացված 2 սպասարկման կենտրոններում պետք է պարտադիր տրամադրվի արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF):	20
Մոնիտոր -1	HP P22 G4 FHD Monitor Էկրան (Display) - մատրիցան IPS տիպի , 21.5-inch Full-HD 1920x1080 LED backlit monitor , Antiglare Պայծառություն (Brightness) - 250 cd/m² Ստատիկ կոնտրաստ (Static Contrast) - 1000:1 Արձագանքման ժամանակը (Response time) - ոչ ուշ քան 5 ms (gray to gray) Կոնտրաստ առնվազն - 1000: 1 (typical) Դիտման անկյունը - առնվազն 178°/178° Պորտեր (Ports) – 1 x VGA, 1 x Display port 1.2, 1 x HDMI 1.4 Մոնիտորը պետք է բավարարի հետեվյալ սերտիֆիկացման պայմաններին - ENERGY STAR, TCO certified Երաշխիք – 3 տարի, որը սպասարկվում է Հայաստանում գործող արտադրողի կողմից ավտորիզացված 2 սպասարկման կենտրոններում պետք է պարտադիր տրամադրվի արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF):	30
Մոնիտոր -2 (սպիտակ գույնի)	MultiSync E221N white Էկրան (Display) - մատրիցան IPS տիպի, 21.5-inch Full-HD 1920x1080 W-LED backlight	30

	Պայծառություն (Brightness) - 250 cd/m² Ստատիկ կոնտրաստ (Static Contrast) - 1000:1 Արձագանքման ժամանակը (Response time) - ոչ ուշ քան 6 ms Կոնտրաստ առնվազն - 1000: 1 (typical) Դիտման անկյունը - առնվազն 178°/178° Պորտեր (Ports) – 1 x D-sub 15 pin , 1 x Display port 1.2, 1 x HDMI 1.4 Աուդիո - 1W + 1W Կանգնակ բարձրության կառավարմամբ՝ առնվազն 110մմ , պտույտի հնարավորություն - առնվազն 45^0 to 45^0 Մոնիտորը պետք է բավարարի հետևյալ սերտիֆիկացման պայմաններին - Energy Star 8.0; RoHS compliant; TCO 8.0 certified Երաշխիք – 3 տարի <u>պետք է պարտադիր տրամադրվի արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF):</u>	
Անխափան սնուցման սարք	APC BE850G2-RS Հզորությունը - ВА/Вт – 850/520 USB կառավարման պորտ USB – A պորտ USB – C պորտ RJ-11 и RJ-45 միացումների պաշտպանության հնարավորություն Ելքի վարդակ -8 հատ, Shuko տիպի Երաշխիք – 2 տարի, որը սպասարկվում է Հայաստանում գործող արտադրողի կողմից ավտորիզացված սպասարկման կենտրոնում <u>պետք է պարտադիր տրամադրվի արտադրողի ավտորիզացիոն նամակ (MAF):</u>	50
Անլար մկնիկի և ստեղնաշարի կոմպլեկտ (սպիտակ գույնի)	Անլար մկնիկ և ստեղնաշարի կոմպլեկտ - սպիտակ գույնի, 2.4GHz	30
Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք (ցանցային) -1	Canon i-SENSYS MF443dw Երաշխիք – 1 տարի	10
Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք -2	Canon i-SENSYS MF3010 Երաշխիք – 1 տարի	30

Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք կարող են մրցութային հայտեր ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի գտնվելու վայր՝ ք.Երևան, Բուզանդի 87-րդ շենք, թիվ 85 հասցեով: Մրցութային հայտերը կարող են ներկայացվել առձեռն (աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 16:00-ն) կամ ուղարկվել պատվիրված նամակով: Հայտերն ընդունվում են մինչև 2021 թվականի մարտի 16-ը ժամը 16:00-ն:

Մրցույթում հաղթող անձի (անձանց) հետ կկնքվի ապրանքի մատակարարման պայմանագիր:

Մրցույթի մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և հաղթողին որոշելու կարգը սահմանված է մրցույթի կանոնակարգով:

Մրցույթում ծածկագրեր չեն կիրառվում:

Մրցույթի հայտերը կբացվեն 2021 թվականի մարտի 16-ին ժամը 18:00-ին, իսկ հայտերի ամփոփումը կկատարվի 2021 թվականի մարտի 17-ին ժամը 18:00-ին:

Մրցույթի կանոնակարգին կարելի է ծանոթանալ ինչպես նաև դրա պատճենները ստանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի գրասենյակում՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:00-ից մինչև 16:00-ն:

Մրցույթի մասնակցության նախավճարը կազմում է 300,000 ՀՀ դրամ, որը ենթակա է կանխիկ վճարման Բանկի դրամարկղ կամ փոխանցման Բանկի 103002101519 հաշվին: